Հեղինակներ՝
Մ.գ.թ., դոցենտ Սրբուհի Լուլուկյան
Բ.գ.թ., դոցենտ Լիանա Սաֆարյան

Հանրակրթական հիմնական դպրոցի
«Գերմաներեն» առարկայի
ԾՐԱԳԻՐ
(2-րդ դասարանի գերմաներեն սովորողների համար)

Առարկայական ծրագրի բովանդակությունն ու կառուցվածքը.
Օտար լեզուների ուսուցման ներկայացված հիմնական նպատակներն իրենց արտացոլումն են գտնում առարկայական ծրագրերում:
Առարկայական ծրագիրն ունի հետևյալ կառուցվածքը. բացատրագիր, բուն ծրագրեր և առաջարկվող գրականության ցանկ:
Առարկայական ծրագրում տրվում է տվյալ դասարանի համար երաշխավորվող թեմաների ցանկը՝ ըստ ժամաքանակի:

Բացատրագիր

Օտար լեզվի գործնական նպատակը ծրագրի սահմաններում հաղորդակցության հիմք ստեղծելն է, այսինքն՝ հասնել այն բանին, որ սովորողը կարողանա շփման որոշակի իրադրություններում հանպատրաստից հաղորդակցվել օտար լեզվով նախատեսված թեմաների շրջանակում (բանավոր խոսք՝ ունկնդրել և խոսել):
Առարկան ուսուցանվում է շաբաթական 1 ժամով դպրոցական բաղադրիչի հաշվին:
Ողջ լեզվական նյութը, քերականությունը, որը մատուցվում է բանավոր, ներմուծվում է ինտեգրված ձևով՝ ամենագործածական խոսքային նմուշների միջոցով:
2-րդ կիսամյակում դասը ուղեկցվում է այբուբենի տառերի պատկերների ծանոթացմամբ:
Նախատեսվում են նաև արտադասարանական աշխատանքներ, որը ներառում է տարբեր թեմատիկ միջոցառումներ, օրինակ՝ թատերական ներկայացում, հետազոտական աշխատանք բնապահպանության վերաբերյալ և այլն:
Այս դասարանի ծրագիրը ներառում է բանավոր շփման հիմնական ձևերի, տարբեր իրավիճակներում հաղորդակցության և լեզվի բազմազանության, մանկական գրականության, երգերի և լեզվակիր երկրների մշակութային այլ տարրերի իմացություն:
Լեզվի գործնական ուսուցման նպատակադրումը պահանջ է ներկայացնում ուսուցման բովանդակության մեջ առանձնահատուկ տեղ տալու բառին ու նրա

իմաստին, ճիշտ բառօգտագործմանը, բառերի իմաստային և քերականական կապակցելիությանը, բառերի փոխաբերական կիրառությանը, նախադասությունների կառուցման մեջ բառերի և բառաձևերի դերին: Սա նպաստելու է ինչպես կապակցված խոսք կազմելու հմտությունների ձևավորմանը, բառապաշարի հարստացմանը, այնպես էլ սովորողների ճանաչողական կարողությունների, աշխարհընկալման, տրամաբանական մտածողության զարգացմանը, հասկացական դաշտի ընդլայնմանը: Քերականության ուսուցումը պետք է հանգեցվի ոչ թե քերականական կանոնները, սահմանումները, հոլովման ու խոնարհման հարացույցները և այլն անգիր անելուն, այլ քերականական ձևերը խոսքում ճիշտ և նպատակահարմար կիրառելուն: Մյուս կարևոր պահանջը լեզվագործածության ուսուցումն է իրական հաղորդակցման տարբեր պայմանների հետ կապակցված: Այստեղ առաջնահերթ նշանակություն ունեն ուսումնական գործունեության ձևերը, որոնք պետք է հնարավորություն տան զարգացնելու սովորողների խոսքային կարողությունները կախված կոնկրետ իրադրությունից, խոսողի նպատակից, ունկնդիրների առանձնահատկություններից և այլ հանգամանքներից:

Օտար լեզուները հաղորդակցման, ինչպես նաև տարբեր մշակույթների փոխազդեցության կարևորագույն միջոց են: Օտար լեզուներին տիրապետումը բարձրացնում է դպրոցականների հումանիտար կրթության մակարդակը, նպաստում է անհատականության ձևավորմանն ու սոցիալացմանը բազմամշակութային ու բազ-մալեզու աշխարհի հարափոփոխ պայմաններում: Բացի այդ, օտար լեզուների ուսուցումը աշակերտներն տալիս է գիտելիքներ տվյալ երկրի, ժողովրդի, նրա պատմության ու մշակույթի ամենաբնորոշ երևույթների մասին: Լեզուն՝ որպես հաղորդակցության միջոց, ոչ միայն հնարավորություն է ընձեռում ամենատարբեր բնագավառներից տեղեկատվություն և գիտելիքներ ձեռք բերել, այլ նաև նպաստում է սովորողների տրամաբանական, վերլուծական մտածողության զարգացմանը, ծանոթացնում է ճանաչողության համապատասխան մեթոդներին:

Ծրագիր

Ծրագրում ներկայացված են ուսուցանվող նյութը, ուսումնական նպատակը և ուսումնական գործունեության տեսակները: Այս կառուցվածքն ընտրված է որպես լրացուցիչ մեթոդական օգնություն ուսուցիչներին, թեև չի փոխարինում առանձին մեթոդական ուղեցույցներին, որոնք պետք է կազմվեն հետագայում ծրագրի և չափորոշչի հիման վրա:

Քանի որ նախաայբբենական շրջանը կառուցվում է բանավոր խոսքի հիման վրա, հետևաբար այս փուլի հիմնական նպատակը տարրական հաղորդակցական կարողություններ ձևավորելն է: Ուսուցման գործընթացը կազմակերպվում է հաղորդակցական երկու հմտությունների՝ լսելու և խոսելու զարգացման

ուղղությամբ, աշակերտների նկատմամբ անհատական մոտեցմամբ, զույգերով և խմբային աշխատանքների նաև խաղային մեթոդների համակցմամբ: Ուսուցման բարձր արդյունավետության հասնելու համար հատկապես կարևորվում է դերային խաղերի, պատկերավոր պաստառների, լեզվակիրների ձայնագրությունների, տեսաֆիլմերի, երգերի և ժամանակակից տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը:

Ուսումնական նպատակը և գործունեության տեսակները նշվում են միայն ամենաընդհանուր ձևով և չեն արտացոլում ուսումնական նյութի յուրաքանչյուր կետը. լեզվաքերականական նյութի մի շարք կետերին կարող են համապատասխանել միևնույն ուսումնական նպատակն ու գործունեության ձևերը: Բացի այդ, ուսուցիչներին հնարավորություն է տրվում ընտրելու ուսումնական գործունեության այլևայլ ձևեր՝ չսահմանափակվելով նշվածներով:

Ուսումնական հիմնական նպատակն է ձևավորել և զարգացնել հաղորդակցական կարողությունները՝ խոսքային գործունեության երկու տեսակներում (ունկնդրել, խոսել) տրված թեմաների և հաղորդակցության հիմնական ոլորտների շրջանակներում:

Ծրագիրը ներառում է հետևյալ թեմաները.

Ես և իմ ընտանիքը
Ինձ շրջապատող մարդիկ
Իմ ընկերները
Ինձ շրջապատող առարկաները
Ընտանի և վայրի կենդանիներ
Իմ դասարանը և դպրոցը
Նախասիրությունները
Բնություն/Շրջակա միջավայր
Իմ բնակարանը
Խաղ/ազատ ժամանակ
Սպորտ
Սնունդ
Տարվա եղանակները/ եղանակ
Առողջություն/Մարմնի մասերը
Տոներ/տոնակատարություններ

2-րդ դասարան

(շաբաթական 1 ժամ, ընդամենը 32 ժամ, որից 6 ժամ կրկնողություն)

Ուսուցանվող նյութ	**Ժամ**	**Ուսուցման նպատակները**	**Ուսումնական գործունեության տեսակները**
Ես և իմ շրջապատը (Ընտանիք և ընկերներ) Ստացական դերանուններ՝ mein, dein, sein, ihr, haben և sein բայեր,mögen բայը, անորոշ հոդ, ածականներ՝ doof, gut, nett, frech, հարցական բառեր՝ Wie alt? Wo? Woher? Կապեր՝ aus, in.	2	Ընդլայնել բառապաշարը թեմատիկ դաշտում՝ ընտանիքի և ընկերների մասին տեղեկություն հաղորդելիս, հասկանալ և արտահայտել մարդկանց էական հատկանիշները, Ճանաչել, հասկանալ և ճիշտ օգտագործել ստացական դերանունները առաջին, երկրորդ և երրորդ դեմքերում առարկաների պատկանելությունը արտահայտելու համար, կիրառել բանավոր խոսքում Wie alt? Wo? Woher? հարցական բառերը Ճանաչել և օգտագործել aus, in նախդիրները	Մարդկանց նկարագրություն, զույգերով աշխատանք, հարց ու պատասխան,
Մասնագիտություններ՝ Arzt, Lehrer, Koch, Polizist, Informatiker և այլն Հարց՝ Was macht deine Mama/ dein Papa? Արտահայտություններ՝ Ich weiß, ich weiß nicht	2	Ճանաչել մասնագիտությունները և նկարագրել գործունեությունները, կիրառել խոսքային նմուշը (ich weiß, ich weiß nicht) հաստատման կամ ժխտման նպատակով	Երգի ունկնդրում, շարժուն խաղ, հարց ու պատասխան համադրման վարժություն նկարներով՝ մասնագիտությունը գործունեությանը
Դպրոց և գրենական պիտույքներ	3	Ընդլայնել բառապաշարը թեմատիկ դաշտում,	Համադրման վարժություններ,

անորոշ հոդի կիրառումը հայցական հոլովում: Ժխտական դերանուն՝ kein, Բայեր՝ lesen, sprechen, malen, schreiben, erzählen, hören, lernen, spielen, singen գոյականներ հայցական հոլովում (Du singst ein Lied.)		կիրառել գոյականները անորոշ հոդի հայցական հոլովում, ճանաչել, հասկանալ և ճիշտ օգտագործել ժխտական հոդը	մնջախաղ, բառերի աղցան, հարց ու պատասխան, զրույց
Տոն՝ Ծննդյան տոն Արտահայտություններ թեմայի վերաբերյալ	2	Ճանաչել տոնը, արտահայտել ցանկություններ տոնի կապակցությամբ	Երգի ունկնդրում, խաղ-երգ, Խմբային աշխատանք՝ նվերի պատրաստում
Բնություն, վայրի կենդանիներ՝ թռչուններ, անտառային և ջրային կենդանիներ Բայեր՝ gehen, laufen, kriechen, springen, schwimmen,fliegen, fressen Գույներ՝ blau, rot, grün, gelb, braun, grau	2	Զարգացնել ճանաչողական հետաքրքրությունները, ընդլայնել թեմատիկ բառապաշարը, նկարագրել կենդանիների գործողությունները	Խաղ-երգ, համադրման վարժություն, շարժուն խաղ՝ «Իմ աջ կողմում տեղն ազատ է»
Տոն՝ Ադվենտ, Սուրբ ծնունդ/նվերներ/ Թեմային նվիրված երգ	2	Ճանաչել տոները, արտահայտել ցանկություններ տոնի կապակցությամբ	Երգի ունկնդրում, խմբային աշխատանք՝ պատրաստել Ադվենտի օրացույց, տոնածառ, նվերներ
Իմ տունը, իմ սենյակը, այբուբենի ծանոթացում հայերենի համեմատությամբ: Ձայնավորներ՝ I,A,O,U,E,Ä,Ö,Ü	2	Ընդլայնել թեմատիկ բառապաշարը, ձևավորել գրելու սկզբնական կարողությունները, ճանաչել տառերի և տառակապակցություն-ների գրաֆիկական պատկերը,	Ունկնդրման վարժություն, արտասանության վարժություն, լրացնել բաց թողնված հնչյունները, խաչբառ, տառախառ

		միաձուլել հնչյուններն ու տառերը վանկերի և առանձին կարճ բառերի մեջ	
Հագուստ Երկհնչյուններ՝ ei, au, ie Բաղաձայներ՝ M,N,F,W,V	2	Ընդլայնել թեմատիկ բառապաշարը, ձևավորել գրելու սկզբնական կարողությունները, ճանաչել տառերի և տառակապակցություն-ների գրաֆիկական պատկերը, միաձուլել հնչյուններն ու տառերը վանկերի և առանձին կարճ բառերի մեջ	Ունկնդրման վարժություն, արտասանության վարժություն, լրացնել բաց թողնված հնչյունները, խաչբառ, տառախառ
Սնունդ Բաղաձայներ՝ R,J,L,T,D	2	Ընդլայնել թեմատիկ բառապաշարը, ձևավորել գրելու սկզբնական կարողությունները, ճանաչել տառերի և տառակապակցություն-ների գրաֆիկական պատկերը, միաձուլել հնչյուններն ու տառերը վանկերի և առանձին կարճ բառերի մեջ	Ունկնդրման վարժություն, արտասանության վարժություն, լրացնել բաց թողնված հնչյունները, խաչբառ տառախառ
Մարմնի մասեր Բաղաձայներ՝ Z,P,B,G,K,Q	2	Ճանաչել մարմի մասերը և կիրառել խոսքային մտադրություններում, ձևավորել գրելու սկզբնական կարողությունները, ճանաչել տառերի և տառակապակցություն-	Բառաքարտեզ, նկարներով բառարան, համադրման վարժություն, բինգո, ունկնդրման վարժություն, արտասանության

		ների գրաֆիկական պատկերը, միաձուլել հնչյուններն ու տառերը վանկերի և առանձին կարճ բառերի մեջ	վարժություն, լրացնել բաց թողնված հնչյունները, խաչբառ
Տոն՝ Զատիկ (Մաս 2) Բաղաձայներ՝ C,H,S,X,Y,ß	2	Ընդլայնել թեմատիկ բառապաշարը, ձևավորել գրելու սկզբնական կարողությունները, ճանաչել տառերի և տառակապակցություն-ների գրաֆիկական պատկերը, միաձուլել հնչյուններն ու տառերը վանկերի և առանձին կարճ բառերի մեջ	Երգի ունկնդրում, խաղ-երգ թեմային նվիրված, ունկնդրման վարժություն, լրացնել բաց թողնված հնչյուններ
Պատկերազարդ գրքի ներկայացում (Գերմանական մանկագրության նմուշ)	2	ապահովել գեղարվեստական ստեղծագործության բովանդակության և զգա-յականի ընկալումը, խթանել միջմշակութային հաղորդակցության զարգացմանը, ապահովել գրքի և գրականության հանդեպ հետաքրքրության աճի դրսևորում	պատկերազարդ գրքի ընթերցում, խաղ, աշխատանք նկարներով
Ընթացիկ կրկնություններ	6		

Առաջարկվող գրականություն

Lehrwerke/ Arbeitshefte

1. Hoppenstedt, Gila; Widlok, Beate (2011): Mit Sinnen experimentieren – Sprache begreifen Frühes Fremdsprachenlernen mit dem CLIL-Ansatz Einführung und Praxisbeispiele. Goethe-Institut e.V., München
2. Morvai, Edit; Veress, Bernadett (2010): Deutsch mit Hans Hase in Kindergarten und Vorschule. Materialpaket. Goethe-Institut e.V., München
3. Becker, Frank, Lohr, Stefan: Buchstaben und Wörter. Spielerisch Deutsch lernen(2013). Ismaning: Hueber
4. Dorst, Gisela(2013): Grundwortschatz-Rätsel für das 1. Schuljahr. Spielerisch Deutsch lernen. Ismaning: Hueber
5. Beurenmeister, Corina(2013): Spaß mit ersten Wörtern. Spielerisch Deutsch lernen. Ismaning: Hueber
6. Swerlowa, Olga (2014): Hallo Anna 1 neu. DaF/DaZ. Stuttgart: Klett
7. Volkmar-Clark, Claudia (2017): Projekt Alphabet. Stuttgart: Klett
8. Garlin, Edgardis/ Merkle, Stefan(2008): KIKUS Deutsch. Arbeitsblätter 1 (3 bis 5 Jahre). Sprachen lernen im Vor- und Grundschulalter. Deutsch als Fremdsprache/Deutsch als Zweitsprache
9. Garlin, Edgardis/ Merkle, Stefan(2008): KIKUS Deutsch. Arbeitsblätter Bildkärtchen zur Bearbeitung und Wiederholung des Wortschatzes. Deutsch als Fremdsprache/Deutsch als Zweitsprache
10. Bilderwörterbuch. Buch mit MP3-Download. Ismaning: Hueber
11. https://www.goethe.de/de/spr/unt/kum/dki/lau.html: Deutsch macht Laune mit Hans Hase. An Stationen wiederholen und üben, A1-Material für die Grundschule

Պատկերազարդ գրքեր/ մանկական պատմություններ

Bilderbücher/Geschichte im FFL/Primar-Unterricht:

Eric Carle:

1. „Die kleine Raupe Nimmersatt“. Gerstenberg Verlag

2. „Die kleine Maus sucht einen Freund“ Gerstenberg Verlag

3. „Mein allererstes Buch der Tierstimmen“ Gerstenberg Verlag

Axel Scheffler, Julia Donaldson:

4. „Der Fuchs sucht seine Socken“ Beltz und Gelberg Verlag

Bauer, Jutta:

5. „Die Königin der Farben“ Beltz und Gelberg Verlag

6. Widlok, Beate (2008): Ameisen, die schaffen viel! Mit Hans Hase lernen Kinder Sprachen. Goethe-Institut e.V., München
7. http://www.labbe.de/spielotti/
8. http://www.kindergarten-workshop.de

Երգեր/ տեսաֆիլմեր

Deutsch mit Socke Filmreihe des WDR für Kinder von 5 – 10 Jahren. Goethe-Institut e.V. Warschau
Garlin, Edgardis/ Merkle, Stefan(2008): KIKUS Deutsch. Liederheft „Guten Morgen“. Ismaning: Hueber
Aguilar, Augusto/ Garlin, Edgardis(2008): KIKUS Deutsch. Audio-CD „Guten Morgen“. Ismaning: Hueber
Schwarz, Martina(2013): Lieder und Reime. Spielerisch Deutsch lernen. Ismaning: Hueber
http://www.goethe.de/lhr/prj/sat/han/beg/lie/deindex.htm : Lieder zum Paket Deutsch lernen mit Hans Hase
http://www.kinderspiele-welt.de/
http://www.kleinkind-online.de
http://www.labbe.de/spielotti/

Շարժուն խաղեր

Dammann, Anke(2013): Lustige Sprachspiele. Spielerisch Deutsch lernen. Ismaning: Hueber
Paterson, Kathy (2008): 120 Übungen für alle Unterrichtssituationen. Mühlheim: Verlag an der Ruhr.
http://www.kleinkind-online.de,
http://www.kindergarten-workshop.de
http://www.kinderspiele-welt.de
http://www.labbe.de/spielotti